

Լ Ե Ռ Ն Ա Կ Ա Ն Ք

Ա.

Փ Ո Ր Ձ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԺՈՂՈՎՈՐԻԳՆԵՐԻ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ

Ո Ի Ր Ո Ի Ս Բ Ի

ԳՐԵՑ

ԳՐ. ՏԵՐ-ՊՕՂՈՍԵԱՆ



Շ Ո Ի Շ Ի

Տպարան Մ. Բաբաջանեանի, Թամիլիեան փողոց № 5.

1910

Լ Ե Ռ Ն Ա Կ Ա Ն Ք

ՓՈՐՁ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԺՈՂՈՎՈՐԳՆԵՐԻ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ

902.6

S-37

Լ Ե Ռ Ն Ա Կ Ա Ն Ք

Ա.

Փ Ո Ր Ձ

ԿՈՎԿԱՍՆԵԱՆ ԺՈՂՈՎՈՐԻԳՆԵՐԻ

ՀԱՄԵՄԵՏԱԿԱՆ ԱԶԳԱԳՐՈՐԹԵԱՆ

Ո Ի Ր Ո Ի Ս Ե Ի

ԳՐԵՑ

ԳՐ. ՏԵՐ-ՊՕՂՈՍԵՆ

~~1387~~

1387



Շ Ո Ւ Շ Ի

Տպարան Մ. Բաբաջանեանի, Թամիրեան փողոց № 5.
1910

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մինչև այսօր հայ բանասէրները չեն զբաղւել կովկասեան ժողովուրդների և հայոց ազգագրական նիւթերի բազմաաութեամբ: Ուստի անմշակ խնդիրներ են նոցա կուլտուրական յարաբերութեան չափը, բնաւորութիւնը, զբոյժը և հետեանքը: Միայն, կարծես պատահական կերպով, այդ մասին հատակոտոր նկատողութիւններ ունին այն ուսումնասիրութիւնները, որոնց բուն նիւթն է նկարագրել օսերի, չերքէզների, չեչենների, ինզուշների, դումբիւնների, շապոււղների և միւս ցեղերի լեզուն, կրօնական, ընտանեկան և դատարանական սովորութիւնները: Այդպիսի հարեանցիօրէն նկատողութիւնները նոյնիսկ մասի վրայ կարելի է թւել: Հակասահաւղէնը յիշում է մի գաղութի աւանդութիւն, որը, Հայաստանից դուրս գալով, վերաբնակւել է օսերի մէջ: Փարս. Տէր-Մովսիսեան համեմատել է հայկական և օսական սնների կազմութիւնը: Մ. Մ. Ковалевский ճանաչել է Գօշի դատաստանագրքի վրացական փոխադրութեան և լեոնոց սովորութեան իրաւունքի մէջ նմանութիւն: Դոքա են զլիւսաւորները և մի քանիսը ըստ կարգին¹⁾: Այդ ամբողջութիւնը բացատրւում է երկու պատճառով. առաջին տեղը բռնում է այն, որ հայոց ազգագրական գրականութիւնը ազքատ էր երկար ժամանակ: Երկրորդ՝ կովկասի ժողովուրդներից մի քանիսը, ինչպէս օսերը, շապուղները և չեչենները, քննադատութեան առաջ հանդիսացան նահապետական կեանքի այն աստիճան ան-

1) Усларъ П. К.—„Лакскій“, „Афхазскій“ языки; Вс. Ө. Миллеръ — „Осетинскіе Этюды“; Д-ръ Файфъ—„Путешествіе по Осетіи“; Гакстгаузенъ—„Закавказскій край“; Փարս. Տէր-Մովսիսեան—„Հայ գիւղական տունը“, Մ. Մ. Ковалевскій—„Законъ и обычай на Кавказѣ“, „Родовой бытъ“ և այլն:

խառն պատկերով, որ չէր կարելի ենթադրել, որ այդ ցեղերը որևէ կուլտուրայից ազդւած են հնագոյն դարերից իվեր: Սակայն այսօր թէ մէկ և թէ միւս հանդամանքները փոխւած են, նախ՝ հայերի ազգագրութիւնը ազդատ չէ կարելի համարել, և երկրորդ՝ կովկասեան սարերի մէջ շատ այնպիսի խորշեր և բարձունքներ կան, ուր թէ կուլտուրաները և թէ ժողովուրդները փոխանակել են իրար, իրենց ազդեցութիւնը թողնելով երկրի և նրա ազգաբնակչութեան վրա. օր. Նազրանի լեռնախորշը, Բակսանի հովիտը և Ուրուսբին¹⁾:

Հայոց և կովկասեան ժողովուրդների կուլտուրական յարաբերութիւնը շատ վաղ է սկսւած և տեւել է ամբողջ միջին և նոր դարերում: Այդ յարաբերութեան մասին տեղեկութիւնները չեն խմբւած և ստուգւած բանասէրներից. յիշենք գլխաւորները.— Տարօնի քուրմերը արքորեցին ու գաղթեցին դէպի Կովկ. սարերի բարձունքները, որպէսզի ազատութեամբ պաշտեն իրենց կրօնը (Աղաթ.): Լեռնական ժողովուրդների թագաւորը հայ արշակունիների ազգականն էր (Փաւս. և Տակիր.): Հայ թագաւորներից ամենաժողովրդականը պսակեց լեռնականների թագուհու հետ (Սորեն.): Հայաստանի առաջին քրիստոնէական խմբական նահատակները— Սուքիասեանք—լեռնական պաններ էին (Յովհ. կաթ. և Յայամ.): Ամարասի նահատակը իր միսիոներական ձրգտումների զոհն եղաւ Վասնեան գաշտում Բ. դարում, իսկ Ե. և Է. դարերում նոյնպիսի գործիչ էին «Յունան Հոնաց Եպիսկոպոսապետ, որ ի Մազքթաց աշխարհէն էր» և «Իսրայէլ նշանագործ եպիսկոպոսն Մեծ-Կողմանց, որ զբազում աշխարհն Խաղրաց և Հոնաց դարձոյց ի քրիստոնէութիւն (Կաղանկ.): Միխիթար Գօշի դատաստանագիրքը մեծ հեղինակութիւն ունէր Վրաստանում և ապա նաև Օսեթիայում: Զ. դարից սկսած Բագրատունիները տիրում էին Վրաստանում և Օսեթիայում: Դադստանի աւերակներից մէկը ունի հայոց կեղեցու մասեր—հիւս. պատի մէջ աւազան, սեղանի երկու կող-

մում խորհրդարաններ և սեղանի վարագոյր¹⁾: Մենք յիշելցինք գլխաւորները միայն, բայց այդքանից էլ երեւում է, որ հայ-լեռնոց կուլտուրական յարաբերութիւնը իւր պատմական մասով աւանդութեան մէջ է ամփոփւած, իսկ իւր ժամանակակից դրութեամբ անմշակ մի խնդիր է:

Եւ եթէ այսօր մենք յարուցանում ենք այդ յարաբերութեան խնդիրը, այդ էլ մի պատմութիւն ունի, որից հետո չէ պատահականութիւնը: Շատ տարիներ առաջ, կովկ. ժողովուրդների լեզուի և ազգագրութեան հետ ծանօթանալու կարիքով, հանդիպեցինք ճանապարհորդական նկարագրութիւնների մէջ այնպիսի տերմինների, որոնք նմանահնչիւն են հայերէն բառերին, և հաւաքում էինք օրինակներ: Միզրում յաճախ, ի հարկէ, մնում էինք տարակուսած թէ անեղձաձային չէ՞ արդեօք այն ապշեցուցիչ նոյնութիւնը, որ կրօնական, ընտանեկան և քրէական կեանքի մէջ գոյութիւն ունի թէ էլբրուսից հիւսիս և թէ Արարատեան դաշտում: Բայց հետզհետէ մեր օրինակները այնպիսի որակ ու քանակ ստացան, որ նոքա կորցրին իրենց անակնկալ բնոյթը. մնում էր միայն ընդունել, որ ակնյայտի կերպով հայ կուլտուրան ազդել ու կերպարանափոխել է դարերի ընթացքում հիւսիսային զբացիներին:

Այսօր, ահա, հազորդելով մեր դիտողութիւնների մի մասը ընթերցողին, նախ պէտք է բացատրենք, որ մենք դժւարացանք հայ-կովկասեան յարաբերութիւնը բաժանել ընտանեկան, կրօնական, քրէական, հոլային և դիւցազնական մասերի, որպէսզի ամբողջ պատկեր ստացւէր մեր աշխատութիւնից: Այդպէս բաղմակողմանի լինելուն խանգարում էր թէ հայ ազգագրութեան դեռ մանուկ հասակը, թէ հայոց և վրաց միջին դարերի պատմութեան անմշակ դրութիւնը և թէ, առհասարակ այն, որ հայ-կովկասեան կուլտուրական յարաբերութեան խնդիրը, ըստ էութեան, մեր, իբրև մի սոսկ անհատի, նիւ-

¹⁾ Հանդ. Ամս. 1895, սպր. 107ր.: Сбор. Свѣд. о Кавказѣ „Изслѣд. объ Осетинах“ II. 1872, 336; Респельр Э.—Арх. изсл. въ Елис. губ. „Весь Кавказъ“ 1903 Тифл., ист. отд. 13—14.

¹⁾ В. Миллеръ—„Осет. Эт.“ т. III, гл. I—III; М. М. Ковалевскій—„Родовой бытъ“; Վ. Գ. Բաստամեան—Միխիթ. Գօշի դատաս. չ. յառաջարանութիւն, Գարագաշեան Քրն. պատմ. չ. Բ. 195, Մ. Եղ. Բարխուդարեան—Պրանից երկիր և գրացիք 1893 Թիֆ. 27:

թական և բարոյական ոյժից վեր զգացինք: Ուստի բաւականացանք մասնաւորով: Որովհետև կովկասի լեռների մէջ ուրոյնացած բազմաթիւ ժողովուրդների մասին միանգամից դժար էր ընգհանուր եզրակացութեան յանգել, այդ պատճառով առանձին մեն մի ժողովուրդի և հայոց կուլտուրական արտայայտութիւնների հարկաւոր կէտերը առանձնացրինք ըստ առւելների կամ ցեղակցութեան և ապա իւրաքանչիւր կէտ ստորագրեցինք զուգակշիռների մէջ համեմատական պատկերով: Մեր ընտրած նիւթերը սովորաբար հրատարակած են, ըստ ծանօթութեան. և միայն քիչ անգամ օգտուել ենք նաև չըհրատարակած այնպիսի նիւթերից, որոնք վերաբերում են կամ մեր Արէշ գաւառին, կամ Արմաւիրի գաղութին, կամ Ղարաբաղի գիւղերին, ու որոնք զուգակշիռների մէջ առհասարակ երկրորդական պաշտօն ունին:

Ուրուսի գիւղը¹⁾ թուրքերից է բազկացած և գտնուում է Էլբրուսի հիւսիս. փէշին, Բակասանի ամիրն, ծ. մ. 5200 ոտն. բարձր: Դիրքը դժարամատչելի է, լեռնաշաւիղները անդունդների շրթունքներով են ձգւած, տեսարանները զմայելելի են: Կովկասի վերջնական գրաւման ժամանակ գիւղացիները հակակրութիւն են ցուցել իշխանութեանը: Հետագոտութեան նպատակով այնտեղ եղել է, ի միջի այլոց, Մ. Մ. Ковалевский, որը իր ուսումնասիրութիւնը ապել է «Вѣстникъ Европы» ամսագրի 1886 թ. № 1 և 2 «У подошвы Эльборуса» վերնագրով: Մ. Մ. Ուրուսի է հասել գոյութիւն ունեցող ընդամէնը երկու ճանապարհից նրանով, որը աւելի դժարին է և վտանգաւոր: Այդ ուղին հանքային ջրերից դէպի գիւղը գնացող կարճ, բայց ձորաշրջուններով ու անդունդներով հարուստ գիծն է: Այդ պատճառով, բացի ազգագրական նիւթերից և հետագոտութիւնից, զբաղեցուցիչ է հեղինակի յօդածը նաև իւր արկածական բնոյթով: Մեր զուգակշիռների համար նիւթը ընտրել ենք Մ. Մ. յիշեալ յօդածից:

ԳՐ. ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆ

1) Գրուում է նաև Урусбиево, Урусбиевский аул.

Լ Ե Ռ Ն Ա Կ Ա Ն Ք

Ո Ր Ր Ո Ր Ր

1. ԵՐԴՈՒՄՆ

Ա. Խայ իգեճի նկարեղ եւ կոխեղ:

«Թուրքերի մէջ ապացոյցի զխաւոր հիմքը երզումն է համարուում, ինչպէս այդ նաև օտերի մէջ է: Ուս վրա որ գրւած է ապացուցանելու պարտաւորութիւնը, նա գնում է մատուր կամ թուրքերի հնչիւնով շուարը» («джуаръ»): Բացի այս կրօնական եղանակից, «Թուրքերին յայտնի է երդման մի ուրիշ աւելի պարզ ձև. որպէսզի խուսափեն տեղափոխութեան և հեռաւոր «Չուարը» գնալու ծախքերից և վընտից, յաճախ նրանք բաւականանում են երգելով հէնց դատաստանի տեղն էլ. բայց այդ դէպքումն էլ ակնյայտնի, թէպէտ և անգիտակցօրէն, արտայայտուում է յիշողութիւնը այնպիսի բոյրովին տարբեր կարգերի մասին, որոնց ժամանակ խաչը կոչւած էր խաղալու ամեն մի քրիստոնեայ ժողովրդի դատաստանի մէջ ընդունւած էական դերը: Թուրքը հողի վրա շրջան է քաշում. շրջանի մէջ իւր գաւազանի սուր ծայրով երկու գիծ է քաշում խաչաձև. կանգնում է շրջանի մէջ տեղ երկու գծի հանդիպման կէտում և երզումով խոստանում է դատաւորներին ասելու ճշմարտութիւնը: Նոյն իսկ այն անունը, որով թուրք լեռնցիին կոչում է այդպիսի երզումը, ցոյց է տալիս նրա քրիստոնէական ծագումը.—Թուրքը յիշում է այդ երզումը ոչ այլպէս, քան եթէ խաչով երզումն և անւանում է «качь» (крестъ):»¹⁾

Թէպէտ հեղինակը չէ յիշում, որ качъ հայոց խաչ բառն է, և փակագծի КРЕСТЬ-ով բառի իմաստն է պարզում, իսկ բառի ծագումը մնում է անյայտ, սակայն

¹⁾ М. М. Ковалевский—„У подошвы Эльборуса“, Вѣст. Евр. 1886 I 108—109.

Գօշ Մխիթարն յիշում է երգման այդ ձևն էլ և գործադրութեան պարագաներն էլ, իբրև հեթանոսական իմաստ և ծագումն ունեցող, ուրացութեան կարգում:

(ա) Յեկեղեցի մտանելով գլոյս շէջուցանել, բ) բերանով իջուր և ի ձէթ փչել, գ) խաչ իգեանի նկարել և կոխել, դ) զշան զձեռոյ ունել, ե) ոսկր ի ձեռն առնուլ, զ) իգեանի երկուս ծիրս առնել և իմիոյ իմիւսն մտանել: Այդ ամենայն և այդպիսքը ուրացութեան օրինակ է, զոր չէ պարտ յանձն առնուլ քրիստոնէի թէև մահ հասանէ կամ ամն քակումն:»¹⁾

Երգման այդ ձևերի հնութիւնը և հեթանոսական ծագումը երևում է այն հանգամանքից, որ դեռ Բարսեղ Կեսարացին մաքառել է, գրելով, որ մոմ հանգցնելը միևնոյն է թէ «լինել ընդ խաչահանունս Քրիստոսի»: սակայն այդ և դրա նման արգելքները չեն կարողացել անհետացնել սովորութիւնը. գ-բզ երգումը այսօր էլ կենդանի է եղիպիների մէջ, գ-բզը մնացել է Թիֆլիսում²⁾ գ-զը Ուրուսերիում, Արէշում և Ղարաբաղում, իսկ առաջին ձևը Ղարաբաղի ենձորստան գիւղում այս ձևով. «Ես գնամ Մըթըղունանց խաչին ճրագ կոպցնեմ, դու եկ հանգցրու»:»³⁾ «Յաչ ի գեանի նկարել և կոխել» երգումը, բացի Ուրուսերից, Արէշում և Ղարաբաղի գիւղերում կատարւում է այսպէս. երբ մէկը ուզում է հաւատացնել, որ իւր ասածը ճշմարիտ է, խաչ է քաշում գաւազանով գեանի վրայ և գաւազանի ծայրը խփում է խաչի սըրտին. բացի այդ, շատ ընդունւած է ամեն խօսքի ժամանակ հաւատացնելու նպատակով և՛ պատմել, և՛ միաժամանակ մատով խաչ գծել գեանին, ցուցական բացականշութիւն անելով—«ըհ՛ը, կըտեսնես հիմա»:

Պարզ է այս բոլորից որ 1) խաչի երգումը հայկական-ժողովրդական է և 2) որ թուրքերը հայերից միայն կարող էին երգման այնպիսի ձևը և անունը ընդ-

1) Բատումեան Վ. Վ. «Մխիթարայ Գօշի դատաստանագիրը Հայոց» 1880, նախադր. 51, յտաջար. 163, 173: Հմմտ. Ս. Մամուկեանի նկատողութիւնները—Հանդ. Ամս. 1908 IX 270—274:

2) Բատում. ibid.

3) «Մարդ ազանի խաչ» է կոչւում, որովհետև եկեղեցու մէջ ապաւինած ժողովրդին աղանի դարձրեց նա, որով և փրկեց նրանց թշնամուց: Ծրագ հանդցնողը առաջ բազնիս էլ է գնում, յետոյ հաղորդւում և ժամաշապիկ հագնում ու հանգցնում: Այդ բոլորը տեղեկացանք ու հաղորդեցիքք Գարբիէլ վարժ. Ղուլիքիխայեանցի խօսքերով, որի համար յայտնում ենք մեր շնորհակալութիւնը:

օրինակել: Աւելին ևս կայ. Կովկասի թիւրքերը երկրիս քրիստոնեաներին իրենց մի արտայայտութեան մէջ բաժանում են 70 ցեղի, ամենայն հաւանականութեամբ 70 աշակերտների լեզուների համաձայն, և այդ բաժանումը նրանք արտայայտում են կրկին հայերէն «խաչ»-ով—եթմիշ խաչ փարազ միլլաթ—խօսքերի մէջ: Կասկած չը կայ, որ Սելջուկեան թիւրքերը Ասիայի նախադասը հայերից ուսան քրիստոնէական կեանքի մանրամասնութիւնները, և բնական է, որ հայերէն բառով էլ նոքա արտայայտէին իրենց գիտութիւնը. ուստի փոխարէն Քրիստոս և քրիստոնեայ համաշխարհային անւան, որ դժւարալուր է միւսիւմանի համար, նրանք հայերէնից ծանօթ խաչը գործ ածեցին, իբր համեմատաբար աւելի տեղական և ուրեմն տանելի բառ. ի հարկէ՛ սա հաւանական մեկնութիւն է, բայց ստոյգը իրողութիւնն է այն պատմական և կուլտուրական ընդհարման և ազգման, որոնց հետևանքներից մէկը «խաչ փարազ»=քրիստոնեայ և երկրորդը խաչ իգեանի նկարել=„качѣ“ (крестъ) երգումն է, որը հանդիպել է Ուրուսերի թիւրքերի մէջ М. М. Ковалевскій-ին:

Մնում է պատասխանել մի հարցի ևս, որով սպառւած պէտք է համարել ուրուսերեցոց խաչի երգման ծագման խնդիրը: Առհասարակ ազգագրական նիւթերի համեմատութիւնը ինքը դեռ ապացոյց չէ այն բանի, թէ երկու ժողովուրդները միևնոյն նիւթը մէկզմէկուց են փոխ առել և եթէ երևայ, որ որևէ չէզոք պայմանի շնորհիւ է միևնոյն ազգագրական նիւթը հանդէս եկել տարբեր ժողովուրդների մէջ, այն ժամանակ այդ ժողովուրդների կուլտուրական ազգման պէտք է վերագրել պատահական բնոյթ. այդպիսի չէզոք պայման են, օրինակ, վաճառականական յարաբերութիւնը և երկարամեայ պատերազմական արշաւանքները, որոնց հետևանքով էլ ազդւում են ժողովուրդները. իսկ ընդհակառակը՝ եթէ երևայ, որ ազգագրական նիւթերը մի ժողովուրդ միւսին է հաղորդել անձամբ և անմիջապէս, պատմական կեանքի տեղական մի շրջանում և մայր կուլտուրայի հայրենիքում, այն ժամանակ կուլտուրական փոխադարձ յարաբերութեան թէ նշանակութիւնը կը փոխուի և թէ

ժողովուրդները հոգեկան կեանքի պատկերը կը պարզւի: Արդ՝ ինչպէս գտնել թէ, արդե՞ք, խաչի երդումը հայը հաղորդել է ուրուերիեցոց նախնիքներին անձամբ և պատմական Հայաստանում, թէ՛ ընդհակառակն, երդումն ինքն է հարաւից հիւսիս տեղափոխել որեւէ չէզոք պայմանի շնորհիւ: Բարեբաղդաբար այդ հարցը լուծուած է շատ գիւրութեամբ, շնորհիւ հետեւեալ հանգամանքի:

Նախ և առաջ, a priori կարելի է ասել, որ սելջուկեան ցեղը, լինելով քաղաքակրթապէս միապաղաղ ժողովուրդ, քրիստոնէական քաղաքակրթութիւնից պէտք է ազդէր ոչ թէ իւր այս կամ այն հատուածով, այլ ամբողջութեամբ, և ուրեմն չենք կարող տարբեր քաղաքակրթական նախապատրաստութիւն և տարբեր յարաբերութիւններ վերագրել այդ ցեղի մեն մի հատուածին, իւր արշաւական շարժումի դարաւոր յառաջնադասման ընթացքում: Երկրորդ՝ արդարև, խաչի երդումը ունին այսօր ոչ միայն էլբրուսի թիւրքը, այլ և Ղափանի և Գեօրիսի թիւրքերը ևս. առհասարակ՝ Արաքսի միջին հոսանքի ոչ-պարսիկ, թաթարական ժողովուրդները գործ են ածում հետեւեալ դարձուածք և երգման ձևը, երբ ուզում են իրենց սասածը հաւաստիացնել. նրկարում են մատով գետնի վրա երկու գիծ և ասում են — «Էրմանըն խաչի օլըն»:

Պարզ է այդ հանգամանքից, որ դեռ ևս այն ժամանակ, երբ սելջուկեան ցեղը հարաւային Կովկասում ապրում էր, իբրև իր արշաւավայրի կայաններից մէկում, ազդել է անձամբ՝ խաչի կուլտուրան և առհասարակ կուլտուրան Ասիայում տարածող հայ ժողովուրդից: Յետոյ նա բաժան-բաժան լինելով, նրա մի մասը մնացել է կուլտուրայի մայր հայրենիքում, իսկ միւս մասը գաղթել է դէպի էլբրուս, տանելով իր հետ նաև կուլտուրական ազգման հետքերը: Այսպէս ահա, աւելի հասկանալի և պայծառ պատկեր է ստանում կովկասեան ցեղերից մէկի և հայոց պատմական յարաբերութիւնը և, դրա հետևանքով, «Սաչի երդումը» ստանում է մի արեաղնեան թելի նշանակութիւն, որոնելու համեմատատական կէտերը նոյն ժողովուրդների այլևայլ ազգագրական նիւթերի մէջ ևս:

Չի կարելի անուշադրութեան մատնել նաև այն՝ խնդրիս համար կարևոր հանգամանքը, որ հայոց պատմական անցեալում շատ բռնի կրօնափոխութիւններ են կատարել քրիստոնէութիւնից դէպի մանձեղականութիւն. ուստի կարող է ընդունել նոյնիսկ, որ թէ Ուրուսիցոց և թէ Արաքսի թիւրքերի մէջ՝ բռնութեամբ կրօնափոխ եղած մի հայկական ցեղից խառնուրդ կայ: Այդ հաւանական մի ենթադրութիւն է, որ իր կամ ամբողջ և կամ մասնաւոր իմաստով կարող է ճշմարիտ լինել: Սակայն դրանով, յիշեալ ժողովուրդների կուլտուրական յարաբերութեան այն ընդթիւր և պատկերը, որ յիշեցինք վերևում, չի փոխել և, ընդհակառակն, ևս առաւել կ'ստուգւի:

Բ. Կրօնաստիւթի տրդումը. — «Качъ» երգման հարաւից դէպի հիւսիս փոխանցելը պատահական և չէզոքացած իրողութիւն չէ, այլ ամբողջ դատաստանական պրօցեսսի և հասկացողութեան հետ միասին է նա անցել մի ժողովրդից միւսին: Այդ ակնյայտնի է դառնում, երբ մենք ասնում ենք դատաւարական մանրամասնութիւնները, որոնք մատնում են սկզբունքների գաղտնիքը:

Հայոց Մայր-Մշտոցը¹⁾ ունի «Վասն երգմանաբի» մի կանոն, որը կարգում էին հին ժամանակ այն մարդու գլխին, ով երգում էր կերել. քահանան²⁾ ազօթում էր — «Թողութիւն շնորհեա սմա, որ յանդգնեցաւ երդնուլ ընդդէմ ամենասուրբ հրամանի ք... թող զյանցանս երգմանաբութեան սորա:» Այդ կանոնի ծագումը պարզ խնդր է. քրիստոնէական աշխարհը հեթանոսութիւնից — անիմիզմի շրջանից ստացաւ երգման գաղափարը, և երգմանար խօսքը, ըստ կազմութեան և իմաստի, այսահար, դիւանար խօսքերի հոմանիշ է: Սակայն քրիստոնէութիւնը նրան շրկարողացաւ ջնջել. իսպառ արգելեց երգել եկեղեցականներին միայն, իսկ աշխարհականներին «հարկ լուծանէ զօրէնս» սկզբունքով

¹⁾ էջ 45ր, ցանկի մէջ չէ նշանակւած:

²⁾ Հայոց եկեղեցու ստորին պաշտօնեաներն էին երգեցնում և ոչ թէ քահանան. երբ «երգմանցոյնը» դատարանի պահանջը լրացնում էր, յետոյ երգում կերած մարդը գալիս էր քահանայի մօտ և նրանից ընդունում թողութիւն իր յանցանքի համար:

թույլատրեց: Նոյն արգելքը ունին նաև լեռնցիք, անա հայոց և լեռնականների արգելքների բառացի համեմատութիւնը¹⁾:

Գ Օ Շ

Семеновъ

Կրճուաւոր, քահանայ և մանուկն մի մտցին իրատաստան, զի մի հարկ լինի երգման: Մոյն կարգ կացցէ և ի վերայ աշխարհական քահանայից: Այլ թէ հարկ լինի դատաստանի, ազգահանք նոցա լցցեն զտեղի նոցա և ընկալեալ լինին ի դատաւորաց:

Կովկասի լեռնցի մահմէդականները յանցանք են համարում երգութիւն, ինչ պատճառով էլ որ նա լինի. ուստի և ազատ են երգութիւն մոլլա, դադի, իշխան, տանուտէր, դատաւոր և այն մարդը, որը ունի հոգևեր իշխանութիւնից վիճակիւր այն մասին, թէ երգել է երբէք չը լինել Կրճուա-երգմանի, մէկին արգարացնելու կամ մեղադրելու համար:

Կրճուաւոր տեղմինի իմաստին համապատասխանում են երգմանաւոր, երգմանի, բայց սորա տեղմին չին, այլ բաղկացեալ բառեր: Տուգանել բայը նշանակում է բռնութեամբ ի հատուցումն հարկադրել մէկին. դատարանական այդ գաղափարը թէ ինչ սերտ անշուքիւն ունի երգման հետ պարզ է. սկզբնական շրջաններում, ինչպէս կրտսերները հետեւեալ զուգակցութիւնը խոսելի միջոց էր ճշմարտութիւնը կամ տուգանքը որոշելու համար, պէտք է ուրեմն երգէին: Տուգանքին հայերէն լեզուի ձայնական յատկութեամբ, հոմանիշ է տուժում և տուժիմ: Տուգանքի և տոյժի մասին Աբրաքայի բառգիրքը տուգանք խօսքի տակ գրում է— «Մերթ տուգանք կոչին անխախտ ամենայն վնասք, զորս և անուանեմք տոյժս. ուստի և երբեմն ի միասին ի գործ ածին իբրև գնոյնանշան. ըստ այսմ օրինակի. տոյժք տուգանաց կամ տուգանս տուժից:» Իմաստի դարգացմամբ տուժել բայը այժմ ունի, դատարանից անկախ, ամեն հատուցման գաղափար, մինչդեռ տուգանքը սնմիջապէս դատարանական տեղմին է: Թէ այդ բոլորը և թէ լեռնականների դատարանական սովորութիւնը արդարանում են Կրճ-ու և տուժ-ել արմատի նմանանշիւն

1) Գօշի դատաստ. Ը. 45—59, 56, Семеновъ Н., „Очерки народныхъ обычаевъ кумыковъ“, Сборникъ Г. Терской Области 1892, кн. II, отд. II, 91.

ձեւերով եթէ ընդունենք որ «տուգանք տուժից» ամենից մօտ է կանցնած ճշմարտութեան, քան տուգանիմ և տուժիմ բայերի արդի իմաստը, կրտսերները, որ արմատի միեւնոյն այդ բազադրեալ ձեւը մասնանշում է թէ տուգանքը տուժից է հետևում. ինչպէս և եղել է միշտ և է նաև լեռնցոց մէջ, այսինքն Կրճ-ու էր հետևում տուգանքը և նրա չափը: Այն էլ կայ, որ Փ լծորդը յեանագոյն է քան բոլոր հագազայինները. ինչպէս չու, լուանալ, ասու, արուեստ առ չոգ, լոգ, ասոգանել, արգաւանգ ձեւեր¹⁾. Նոյնպէս նաև տուժ-ել նախագոյն է քան տուգանել: Սովորական է նաև որ ժ, գ, ս և շ ձայները լեռնցոց յատուկ խեցրեկ արտաբերութեամբ փոխանակւած են մէկգմէկու, ինչպէս ներկայ գէպըում տուժ—տուս: Ինչպէս է, որ երգման պրօցեսսի մանրամասնութիւնները և տեղմինները մոռացւելին քրիստոնէական հալածանքի տակ և դեռ ևս գոհ պիտի լինենք, որ լեռնցոց Կրճ-ու և հայոց տոյժ իբրև հնութեան մնացորդներ մէկգմէկու իմաստ են տալիս և ժողովուրդների քաղաքակրթութեան խնդիրը պարզում:

Փ. Երդումը գերագանցում է վկայից.— Երգման գործադրութիւնը նոյնպէս զուգակցւում է, ըստ Գօշի, երգել կարելի է նախ և առաջ երբ վկաներ չկան:

«Հասարակապէս յամենայն իրս դատաստանի, որոյ վկայ կայցէ, մի լինի երգումն. իսկ որոյ վկայ ոչ կայցէ, հարկ է երգումն». «Եւ որոյ վկայ ոչ կայցէ, երգմամբ միւսի կողման հասցի վճիռն»: Ուրուսբիկոց մօտ. «Если свидѣтелей сдѣлки нѣтъ болѣе въ живыхъ, ихъ показаніе въ этомъ случаѣ замѣняется присягой отвѣтника»²⁾.

Առանձին ուշագրութիւն է գրաւում վկանների դերը երկու երկիրներում ևս: Հայոց մէջ երգումը ծայրայեղ գործածութիւն ունէր, իսկ վկանների ցուցումը երկրորդական էր համարւում: Պատժական և արգելական օրէնքը միշտ ժխտում է այն ամենը, ինչ որ կեանքի մէջ գոյութիւն ունէր. ուստի երբ Գօշը թոյլ է տալիս երգել միայն այն ժամանակ, երբ վկաններ չկան, երբ կողմերը ուրիշ կերպ չեն հաշուում, և երբ դատաւորն է պահան-

1) Հանդ. Ամս. 1907 IX 280, 1909 I. 24.

2) Գատաստանագիրք Հայոց Նախ. Ը. 49—59, 53, 29.

3) Вѣст. Евр. 1886, I. 109.

Ղոււմ—այդ նշանակում է, որ նրա դարում երգում էին վիճայ եղած ժամանակ էլ և այլապէս կատարող դատարանական պրօցեսսը յարգի չէր. յարգի էր միայն երգումը. ահա վերաբերութեամբ միեւնոյն ինչգրին, Ուրուսբի գիւղի սովորութիւնը նոյնն է. երկար համեմատութիւնից յետոյ Մ. Մ. Ковалевский գրում է.

Все это какъ нельзя убѣждаетъ въ томъ, что древнѣйшему процессу горцевъ, свидѣтельское показаніе, какъ самостоятельный видъ доказательсва, отличный отъ присяги родственниковъ, вовсе не было извѣстно¹⁾.

Գ. Կնոյ սոսնի երդումը.— Մ. Մ. Ковалевский իր դասախօսութիւնների և „Родовой бытъ“ աշխատութեան մէջ համեմատական քայլով ցուցել է, որ Մորգանից հաստատուած «մայրական» կարգերը զեռ գոյութիւն ունին օսերի մէջ. Ուրուսբիեցիք յետ չեն մնում նրանցից. մինչդեռ օսերի մէջ քրիստոնէական կամ որևէ ուրիշ ազդեցութեամբ ջնջւած է օսերի սովորութիւնը պահանջելու, որ երգումը ուտի պատասխանատու անձի մօր տոնը, ընդհակառակն ուրուսբիեցոց սովորութեամբ առաջին տեղն է բռնում մօր ճիւղագրութիւնը.

„Кого изъ числа родственниковъ ставятъ татары на первомъ планѣ, кому поручаютъ они подкрѣпить свое показаніе присягой заинтересованной стороны—не родственникамъ по отцу и вообще не родственникамъ по мужской линіи—а дядѣ по матери и за нимъ племяннику въ женскомъ колѣнѣ, сыну сестры²⁾).

Հայոց դատաստանագիրքն էլ չի պահել այդ իրարութիւնը. բայց մեզ թւում է թէ հայերից օտար չէ եղած այն, ինչ որ Ուրուսբիեցոց մէջ այժմ սովորական է, և Գօշը պահել է յիշատակած խտրութեան մի հետքը. բոլոր երգելու իրաւունքից զուրկ մարդիկ—ծերունիներ, հիւանդներ, մաքսաւորներ, ապաշխարողներ և նոյն իրաւունքից զուրկ կանայք—պառաններ, հիւանդներ, ապաշխարողներ—իրենց փոխարէն, հարկը պահանջած զէպքում, պարտաւոր են երգող ցոյց տալ, միայն մի պայմանով. այդպիսի մարդիկ պէտք է ցոյց տան կամ իրենց հօրը, կամ եղբօրը և կամ իրենց որդոց, իսկ կա-

1) Вѣстникъ Евр. 1886 I. 108.

2) Ibid., 108.

նայր չեն կարող ցոյց տալ իրենց մարդուն, որդուն, ազնկանը, փեսային, սկեսրայրին և առհասարակ իր մարդու տոնից մէկին. այլ այդպիսի կանանց փոխարէն կարող են երգել «մայր և քոյր կամ եղբայր, կամ այլ սիրելի կամ մերձաւորը, նոքա երգեցեն և զմիմեանց բնոն բարձցեն»։ Տարբեր շաղկով այս խտրութիւնը կրկին մայրական կարգն է ակնաբեկում։ Պէտք է յիշենք, որ Արեշում գողի հօրը երգեցնել անկանոն չէ. բայց մօր եղբօրը—խատութիւն է, իսկ մօրը հօրը—համարեն յանցանք։

2. ԿԱԹՆԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ

Գօշ, աւանելով Թաղէոս առաքեալին վերադրած կանոններից 31-րդ յօդ., գրում է.

«Հարցումն. որ միոյ մօր կաթամբ մնեալ իցեն օտարը իմիմեանց, յորժամ իչափ հասանեն արժան է ամուսնանալ։ Պատասխանի. Չէ պարտ արժան. քանզի ծնողն և ստնտուն ընդ մի համար են»¹⁾

Այստեղ խօսքը մի զոյգի մասին է, տղայի և աղջկայ. մինչդեռ Արեշում և առհասարակ մեր գաւառներում ոչ միայն մի զոյգը, այլ կնքահայրերը մէկզմէկու ոչ աղջիկ են տալիս և ոչ էլ աւնում են. կնքահայրերը մեր նախնեաց դայեակների ու ստնտունների յետին մնացորդն են. Արեշում կնքահայրութիւնը կոչւում է որդեգիր բառով—օրդագիրութիւն։ Նոյնը նաև լեռնոցոց մէջ է, որոնք աւելի հին իմաստ և նշանակութիւն են տալիս ստնտունին և շատ կէտերով համեմատուում են մեր նախնեաց հետ.

„Молочное родство, порождаемое фактомъ вскармливанія ребенка грудью, также соблюдается татарами весьма строго. Между родомъ кормилицы и родомъ вскормленнаго ею не можетъ быть брака²⁾». Ուրուսբիեցին ասում է. „Молоко такъ далеко идетъ, какъ кровь“.

Մեր ժողովուրդը այդ չունի, բայց մօտաւորապէս նոյն իմաստը բովանդակում է հայկական առածը—«կաթի հետ մտածը հոգու հետ զուրս կըզայ»³⁾ որի մէջ կաթի ազդեցութեան մասին է խօսքը։

1) Պատաստանագիրք Ա. 193.

2) Вѣстн. Евр. 1886 II. 568 և IX. 34.

3) Էմին. ազգ. ժող. Հատ. Ա. 109: «Թիֆլիզեց. մտաւոր կեանքը» Գ. Տէր-Աղէք. 1885, Թիֆլ. 120.

կաթնեղբայրութեան վերաբերեալ օրէնսգրութիւնը, որի համեմատութիւնը տեսանք արդէն, խորին հնութիւնից է ծագում. բայց մենք կանգ չենք առնիլ այստեղ այդ ինչորի վրա, ուրիշ պատեճ առիթ ունենալով զբա համար. կըլիշենք միայն երկու ժողովուրդների անգիր վիպասանութեան գրի առած հատուծների բառացի համեմատութիւնը՝ վերաբերեալ կաթնեղբայրութեան: Մայրական շրջանից յետոյ, հայրական շրջանի սկզբում ստեղծուեց հրէշային կամ ճիւղազային մօր առասպելական պատկերը¹⁾, այնուհետեւ երկար ժամանակ գոյութիւն ունէին որդեգրութեան այնպիսի ձևեր, որոնք մօր ստինքի շնորհիւ էին սրբազորւում. վրէժինդրութիւնից փրկել կարելի էր նոյնպէս ստինքի շնորհիւ: Հետեւեալ համեմատութեան մէջ, հրէշային պառաւներից փրկելու համար, նրա կաթով որդեգրում են հայ և լեռնցի հերոսները, կաթնեղբայր են դառնում պառաւների հրէշային աղջիկներին և, մայրատիրական ամենասկզբնական կարգերի համաձայն, առնում են իրենց կաթնքրոջ:

Գաւթ և Մհեր ²⁾	Шайай ¹⁾
Գնաց տեսաւ մէկ տեղացի մուխ ըմ կ'ենի:	Глазамъ Алаугана представилась громадной величины женщина „Эмегена“ съ откинутыми назадъ чрезъ плечо персями: она зачиналя трещины земли, при помощи иглы, которая была величиной съ хорошее бревно, а нитка—какъ арканъ. При видѣ такой громадины, Алауганъ совершенно оробѣлъ и не зналъ, на что рѣшиться. „Если пуститься бѣжать, разсуждалъ онъ, то Эмегена догонитъ и, навѣрно, съѣсть; а не бѣжать и подойти къ ней—страшно“. Думалъ, думалъ и, наконецъ, рѣшился онъ поти-
Յէրի տակ էր. գնաց էն յէրի տակ:	
Տեսաւ՝ մէկ պառաւ նստի, լաց կը թիւի.	
Ծծեր թալիր վար թեքերուն,	
Ծծեր ինչիս շան լակոտ յիւրար կանոն:	
Մհեր վախացաւ, ասաց.	
Թը գեազտիկ թլլեմ, էնու ծծեր բռնեմ,	
Տ'ենի կեօլ, ընչնի մըջ իմ սրտին.	
Թ'աշքեարայ անեմ, վախեմ նամ էնի ձի յողթի:	

1) Липпертъ, Исторія Семьи 1897 СПб., 57...
 2) Մ. Արեղեան, Շուշի 1889, 55—6.
 3) С. Урусбиевъ— „Сказанія о нартскихъ богатыряхъ“, Сбор. матер. для опис. мѣст. и плем. Кавказа, вып. I. отд. II. 8—9 1881, Тифлисъ.

Բամիլի տիւէն գեազտիկ թլլեց,
 Պառաւ ծծեր բռնեց, քամեց.
 Արուն, արնճիւր էկաւ տիւս ծծերաց:
 Պառաւ ասաց.—Ա՛խ, էս յիմացիլ էր՝ Գաւթ սպանիլ են, էս Գաւթի զարմի տարբերն ի ձի խասաւ:—Ասաց.—Ի՞մ ծծեր թնւղ տուր, մէկ աղջիկ ունիմ, անուն Գոհար խաթուն, եօթ տարի էլաւ՝ Հալբայ թագաւոր թրի վրայ ի՛ չեմ ի տայ էնոր. թնւղ տուր, իմ աղջիկ սամ քե: Մհեր թուղ հասաւ:

хоньку подойти къ ней сзади и тотчасъ взять ея перси себѣ въ ротъ и такимъ образомъ сразу стать ея молочнымъ сыномъ. Такъ онъ и сдѣлалъ. Эмегена быстро обернула голову назадъ и, увидѣвъ Алаугана, проговорила: „Ахъ, какъ жаль, что ты такъ скоро сдѣлался моимъ ребенкомъ; а то былъ бы для меня сладкимъ кусочкомъ“... Алауганъ разсказалъ ей, что онъ до старости остался холостымъ, а теперь ѣдетъ отыскивать себѣ невѣсту. —„Ахъ, какъ это кстати! я тоже вышла изъ дому какъ разъ для того, чтобы найти жениха для своей единственной прекрасной дочери, вотъ, право, какое счастливое совпаденіе! Пойдемъ къ ней: увидѣвъ ее, ты, конечно, полюбишь ее!“

Այս համեմատութիւնից երևում է, որ մայրական շրջանի կարգերի համաձայն, և հակառակ Միւրթարի կանոնի և Ուրուսրիկցոց սովորութեան, կաթնեղբայրութիւնը ամենահին ժամանակները ուրիշ նպատակ և նշանակութիւն եւ ունեցել է.—Մհեր և Ալաուգան առնում են իրենց կաթնքրոջ, որդեգրելով կաթնեղբայրութեան կարգով: Իսկ թէ ինչու թշնամի էին հերոսները պառաւներին, և առնասարակ թէ ինչ միտք ունին վէպերը այդ կէտում—այդ հարցերը մենք թողնում ենք:

3. ՀԱՐՍԱՆԻՔ

«Ա. Բարձ փոխել».—Մի ուրիշ զուգադիպութիւն կրկին մեզ փոխադրում է ամուսնական ինչորի զարգացման այն շրջանը, երբ հայրական կարգերի ոյժով աղջիկը պէտք է բռնի կերպով¹⁾ բաժանւէր իր մօր

1) «Զիարդ ոչ գրաես, եթէ զոր ոչն է ծնեալ, ոչ է ժառանգ, և զոր ոչն է գնեալ, կամ աւարեալ, ոչ է ծառայ», Գր. Մաղիս. Թղթիւրը, Աղեքս. 1910, 232.

տոնմից, որպէսզի փեսայի սեպհականութիւնը դառնար, երբ ամուսնութեան զարգացման պերիպետիաներից մէկը աղջիկ փախցնելու սովորութիւնն էր: Բայց հարց էր թէ ուր տանել աղջկան, փեսայի տունը չէր կարելի տանել, քանի որ, որոշ գաղափարի ազդմամբ, փեսայի տոնմը համարուեալ էր նորահարսին տոնմական և համայնական սեպհականութիւն և փեսան, ըստ հերթի, ամենից վերջն էր ստանում իր կնոջ հետ յարաբերութիւն սկսելու իրաւունք: Աղջկայ մօր տունը ինքնըստինքեան չէր կարելի, որովհետեւ, հայրական կարգերի ոյժով, փեսան, իբրև գողացւած աղջկայ սեպհականատէրը, ստիպուած չէր իր գոքանջի տանը ապրել՝ իբրև հիւր և ծառայել՝ իբրև ստորագրեալ¹⁾: Իհարկէ՝ քաղաքակրթական ընթացքը ուղիղ գծով չէ միշտ շարժուել և հին սովորութիւնների հետքերը մինչև այսօր էլ նկատելի են ժողովրդական կենսութեամբ. սակայն միանգամ արդէն հասունացած գաղափարն էլ չէր կանգ առնում և ստեղծում էր տրագիկոյից և հնից պաշտպանւելու պատնէշներ: Որպէսզի փեսան, աղջիկ փախցնելով, կարողանար իւր անխառն և անբիծ ժառանգը յարուցանել նախնեաց պաշտամունքի համար և ազատ մնար նրա ընտանեկան ինտիմ կեանքը և՛ տոնմի, և՛ քրմի, և՛ նահապետի ու կալաճատի շուրջ առաջին գիշերւայ իրաւունքից (jus primae noctis²⁾), փեսան իր հարսի հետ առաջին ամուսնական օրից սկսած փոխադրուեալ էր մի երրորդ, օտար, միջնորդ տարրի տունը և այնտեղ էր ապրում մի քանի ամիս շարունակ: Որոշուելիցիք ունին այդ սովորութեան վերջին մասը.

„Первое время послѣ свадьбы мужъ можетъ жить съ молодою не иначе, какъ въ чужомъ домѣ, домѣ пріятеля, который отнынѣ становится для него лицомъ столь же близкимъ, какъ и аталыкъъ, или воспитатель, и получаетъ названіе „балушъ“³⁾.

Այնու ամենայնիւ տոնմի իրաւունքը աղջկայ վրա

1) Սկզբում նահապետական տան մէջ այդ կարգը ընդունելի էր իբրև միջոց կին անելու կամ գնելու. օր. Յակովբ նահապետի 14 տարւայ կեանքը Սառանում կիայի և Ռաբելի համար:

2) Ю. Липпертъ—„Исторія Семьи“, СПб. 1897, 140—141.

3) М. М. Ковалевскій „У подошвы Эльборуса“ 1886, II, 565—566.

չրկորաւ իսպառ. Ուրուսերիւմ հարսի և տղայի ծանօթ երիտասարդները խանգարում են նորագասկներին. նրանք հաւարում են «բալուշի» տան կտուրը, և ծխնելոյզից քար, սպանւած թռչուն, ընտանի կենդանիներ, իրենց գտակները և շատ այդպիսի իրեր են ձգում ներս, հրացան են պարպում, ազմուկ ու անկարգութիւններ են անում: Սոքա բոլորը հնապատմական հետքեր են երբեմնական սովորութեան, առաջին գիշերի իրաւունքի, որը ուժեղ գործադրութիւն ունէր հնում, և որից ազատւելու համար պէտք եղաւ „балушъ“-ի սովորութիւնը ստեղծել. բալուշ նշանակում է բարձ: Փեսան և հարսը իրենց ամուսնական բարձերը փոխարինում էին մի երրորդ մարդու, միջնորդի բարձով:

Հայերը չունին ոչ ինքը բալուշի սովորութիւնը և ոչ էլ նրա հետքն անգամ պահւած է արարողութիւնների մէջ. մինչդեռ թէ՛ առաջին գիշերի իրաւունքի, և թէ՛ առհասարակ ամուսնական հին ձևերի հետքերը խիստ գունատը գծերով կարելի է նկատել գեղջուկ հարսանիքների ժամանակ¹⁾: Միայն բալուշի հետքերի իսպառ ջնջւիլը, երևի, որևէ զօրեղ պատճառ է ունեցել. որովհետև ամբողջ ամուսնական սովորութիւնից միայն բալուշի բացակայութիւնը թէպէտ անհնարին չէ մտածել, բայց անհաւանական չէ մտածել նաև, որ նա գոյութիւն է ունեցել որոշ՝ և ցայժմ իսկ իւր հետքերով յայտնի պատճառների հետևանքով: Եւ արդարև, բալուշից հայերը պահել են մի ստացւած, որը անմիտ մեկնութիւն է ստացել այժմ և որը միայն Տայլորի եղանակով²⁾ պէտք է մեկնել, իբրև բուզիմեն. «Բարձը թող փոխի, երեխայ կունենայ»: Իմաստի զարգացմամբ այս զարձաճը գործ է ածուում ամեն ամուլ կնոջ համար և հեզնութիւն կայ նրա գործածութեան մէջ՝ անհաւատարմութեան վերաբերեալ:

Բ. Քաղցրնկեր. — Ուրուսերիկոց հարսանեկան արարութեան մէջ պահւած է, նման կապ—խաչ տերմինի, մի հայերէն բառ. փեսայի հետ արշաւախումը կազմող

1) Հմեռ. նիւթեր են Շահապիվանի ժողովի կանոնները, Ազգ. Հանդէսի մէջ հասանեաց նկարագիրները և Գօշի դատաստանագրքի համապատասխանող յօդւածները (տես ստորև):

2) Тайлоръ—Первобыт. культура, 1872 СПб. I 234...

և հերոսին մասնակցող երկոտասարդները Ուրուսբիում կոչուում են հայերէն բառով և արտաբերութեամբ «քաջ-ընկեր»:

„Въ свою очередь, поѣзжане, или „кїедженгеры“, посылаемые женихомъ за невестой, приготавлиются къ поѣздкѣ точно къ бою.“¹⁾

«Քաջընկեր» տերմին չունին հայերը, մակար, ազապ բառերն էլ օտար են և յայտնի չէ թէ հին հայերը ինչ տերմին են ունեցել: Այդ առիթով աւելորդ չէ նկատել, որ բոլոր ազգերը, որոնց հարսանեկան արարողութիւնները հետաքրքրի են նիւթիս համար, համապատասխանող տերմինի փոխարէն նկարագրական բառեր են գործածել: Շահապիվանի ժողովի կանոններէ մէջ ազջիկ փախցնող փեսան կոչուում է սուտ փեսայ, նրա ընկերները—օգնականք, իսկ արշաւանքը—հրոս: Կանոնը և նրան կցած մի խրատը գտնուում են Գօշի գատաստանագրքի մէջ—Ա. Դ.Ձ. 199—200.

«Եւ որք հրոս երթեալ իցեն և օգնականք սուտ փեսային, առ այրն հարիւր դրամ սուգան տացեն և զհրոսին դրամն զկէան յեկեղեցին տացեն և զկէան կարօտելոյ»:

Յրանսիական հարսանեկան աւագակախմբի (շայկա) անդամները, որոնք նոյնպիսի տուգանքներէ ենթարկուցին օրէնքով, կոչուում էին «զգնականներ», «բաժակակիցներ» և «զինւորներ»: Մերք-սլաւոնները կոչուում էին „господинь“¹⁾). Այս բոլոր գէպքերում միեւնոյն իրի տարբեր անուններն են, յատուկ տերմինից զուրկ, նկարագրական բառերով հանդիսանում: Հին կտակարանն էլ մի նկարագրութիւն ունի փեսայի օգնականների վերաբերեալ, որտեղ ահա քաջ նիզակակից են կոչուած շքախմբի անդամները: «Երգ Երգոցի» մէջ թարգմանիչները, հանդիպելով Սողոմոնի գահոյքի նկարագրին, գրում են նախ հարսի և ապա փեսայի շքախմբի մասին.

Մի է աղանի իմ, կատարեալ իմ, մի մօր իւրոյ ընտրեալ ծնողի իւրոյ, վաթսուն են թագուհիք և ութսուն հարձք և օրիւրդք, որց ոչ գոյ թիւ: Ահա գահոյք Սողոմոնի. վաթսուն սպտաղէնք շուրջ գնովաւ իբաջայն իւրայելի. ամենքեան սուսերաւորք հմուտք պատերազմի... ելէք հայեարուք գտեքք Սիւնի յաբքայ Սողոմոն իպսակն որով պսակեաց զնա մայր իր յաւուր փեսայութեան իբոյ:²⁾

1) Вѣст. Евр. II. 1886, 566. „У подошвы Эльборуса“ М. М. К.

2) Липпертъ Ю. Исторія Семьи 1897 СПб. 124.

2) Երգ Երգոց Զ. 7—10.

Թէ ինչպէս և ինչու Ուրուսբիում պէտք է հանդէս գան հայկական սոյոթութիւններն և խօսակցական բառերը—մենք վերջում կը պարզենք. նկատենք այստեղ միայն այսբանը, որ մեր առաջ հանդիսանում է շատ բնական մի երևոյթ. կուշտուրական ազգերը ազգում են յետամնաց ժողովուրդների վրա, և իրենք առաջ են գընում ու զարեբի ընթացքում նոյնիսկ մոռանում են իրենց հին կեանքը, միշտ նորոգելով, մինչդեռ ազգուղ ժողովուրդները, շնորհիւ իրենց պահպանողական հաստատ անշարժութեան, պահում են հնութեան մուրաքածոյ քաղաքակրթական փշուրները, նոյնիսկ անհասկանալի բովանդակութեամբ և մակդիր զարձած տերմիններով:

4. ՄԱՍՆԱԻՈՐ ՍԵՊՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա. Հողի անձեռնմխելիութիւն. — Համայնական սկզբունքներից էր բղխում հողի անձեռնմխելիութիւնը Ուրուսբիում ընտանեկան համայնքի պլուխը շատ կէտերով նմանում է հոռմէական pater familias-ին. բայց շատ կէտերով էլ տարբերում է նրանից. օրինակ նա իրաւունք չունի ընտանիքից անդամ հրաժարեցնել և ընտանիքի կայքը և եկամուտը ծախել ու փոխառութիւն անել: Այդ երկու հարցերը վճուում են ընտանեկան խորհրդի բոլոր անդամների համաձայնութեամբ, իսկ եթէ զէթ մի բողոքող գանւեց, համաձայնութիւնը կը քանդուի: Ընտանեկան խորհրդի օրինական համաձայնութեամբ վաճառուած համայնական կայքը գնողի յախտնական սեպհականութիւնը կազմել չի կարող. որովհետեւ ընտանիքից մէկ անդամ, երբ որ կամենայ, իբրաւունք ունի, վճարուած գինը վերադարձնելով գնողին, կայքը նրա իրաւունքից հանել և վերստին իր ընտանիքի կամ համայնքի սեպհականութիւնը վարձնել: Ամբողջ ասիների մէջ նոյնպիսի կարգով ահա պահպանուում է համայնական հողի անկորուստ մնալու սկզբունքը: Ահա այդ մասին հայոց կանոնագրքի յօդուածները. նրանց մէջ նկատելի է մի արամազրութիւն վերոյիշեալ սկզբունքի խախտելու կամ մեղմացնելու.

ծագում են արար. մահր, կամ մէհր արմատից, որ միջին դարերում հայոց մէջ նշանակում էր գին անձին, կաթնագին, կնոջ ստացած ընծան, ինչպէս այդ երևում է հայոց դատաստանագրքի յօդւածից Ա. ՃԻԱ. 289.

«Այլպէս լինի առ մահմէտականն զուզումն ամուսնութեան. զի հատանեն նախ գին անձին կնոջըն, որ կոչի մահր... Եւ իախրել առն ամուսնութեամբ անձին կնոջն՝ յայնմհետէ մահրն անգառնալի կնոջն մնայ:»

Հայոց տերմինները—տուայր և պոռոյգ—այժմ գործածական չեն. գաւառներում յայտնի են նազդ, բաշլըղ, երեսացտես¹⁾, խալաթ բառերը, որոնք նոր և օտարամուտ են. այդպէս է նաև Արէշի և Ղարաբաղի «բարգան» կապելը. նշանակում է աղջկայ ստացած ընծաներից մէկը: Իսկ Արարատեան դաշտում «բահրա» կոչւում է հողի կապալագինը կամ փողով կամ արգիւնքով:

5. Հ Ո Փ Ե Հ Ա Յ

Հոգեհացի սովորութիւնը, նախնեաց պաշտամունքի հնաւանդ մնացորդը լինելով, չափազանցութեան է հասած լեռնոց մէջ: Ամեն մի մեռելհաց 400—2000 բուբլի էր նստում և ամեն մի ննջեցեալի համար երեք պարտաւորեցուցիչ հացկերոյթ էր լինում, ամեն մէկը 10—17 եղ և 95—168 ոչխար մսացուներով, այլև համապատասխան քանակութեամբ օղի ու գարեջուր էր ծախսում: Առանձին շուք էր ստանում հնում տարելիցի հացը, որ կատարւում էր ամբողջ հասարակութեան, այն է մի քանի աուլների մասնակցութեամբ բոլոր մեռեալների համար մարտի կէսերին. տեւում էր մի քանի օր, և ամեն անգամ հացից յետոյ խաղեր, մրցութիւններ և ձիարշաւներ էին կատարւում: Ռուսները օս գնդապետ Кундуковъ-ի նախաձեռնութեամբ աշխատեցին, որ վերացնեն ժողովրդին քայքայող այդ սովորութիւնը, բայց

¹⁾ Թուր թէ նկարագրական տերմինները ստեղծւած են քրիստոնէութեան առաջին դարերում, ընդդէմ հեթանոսական տերմինների, և յետին ժամանակ չեն կազմուած. «երեսաց տես» մուտք է գտել Աստուածաշնչի թարգմանութեան մէջ. «Արիմէլք ցՄառաստէ. ահա ետու հազար սատեր եղբոր քում, այն եղիցի քեզ ի պատիւ. երեսաց քոց:» Յնն. Ի. 16.

անյաջող անցաւ և սովորութիւնը տեւում էր մինչև 1890-ական թւերը: Ժամանակի ընթացքում իրենք լեռնցիք զլխաւորապէս քաղաքակրթութեան ազդմամբ մեղմացրին աւերիչ սովորութեան ծանրութիւնը¹⁾:

Հայերն էլ նոյն սովորութիւնը ունեցել են միատեսակ պատճառով և հետևանքով. ներսէս Մեծից սկսած մինչև ներսէս V, Դ—ԺԹ դարը, մաքառել է եկեղեցին այդ սովորութեան դէմ ժողովներով և հովակաւն թըղթերով: Ահա Գօշի խօսքերը. եկեղեցիներում ու վանքերում հոգեհացը սովորական կերուխումի, խնջոյքի և քէֆի ձևով էր կատարւում. Պարտաւի ժողովը (8-րդ կանոն) հրամայում էր եկեղեցու դռները չբփակել այդպիսի ժամանակ, պատճառելով անկարգութիւնը, որ կատարւում էին ուխտաւորները, և հոգեհացի ժողոված բազմութիւնը: Կանոնագրքի Ա ՃԴ և I 103 (էջ 413, 208) յօդւածներով արգելւում է թէ՛ անկարգութիւնը և թէ՛ եկեղեցու դռները փակել:

«Բայց զհոգեհանգիստ իվանս առնել ոչ է ըստ օրինաց դատաստանի գրոց: Իսկ եթէ յաղագս անձեռնաստութեան կամ յաղագս յուսոյ իվանս տարցին և մատկերութիւն անդ առնիցեն, մի՛ լիցի քահանայից աշխարհի հակառակել յաղագս այտոցիկ, զի ոչ է դատաստան աւելի քան զկարն պահանջել և զլոյս հատանել, զի այլոց անկարգութեանց պարտին վրէժս ինզրել և ոչ յաղագս այտոցիկ» (էջ 95—96, I դ.): Հոգեպաշտութեան և նախնեաց կուլտի ծիսական կեանքը տարբեր ցեղերի, քաղաքակրթութեան աստիճանի և ծագման ժողովուրդներին ևս յատուկ է. այդ պատճառով հոգեհացի սովորութեան թէ՛ լեռներից հիւսիսում և թէ՛ հարաւում ունեցած այդ միօրինակ պատկերը մի դարմանալի և անսպասելի երևոյթ չէր լինիլ և չէ իսկ, եթէ բաժանենք յիշեալ ծիսական կեանքից արտայայտիչ մի տերմին, որ երկու ժողովուրդների, հայոց և ուրուսերիցոց, համար էլ միատեսակ իմաստ ունի մինչև այսօր: Հայերը ունին 1) «Թաղման հաց» կամ քելիս, կամ երեսի հաց, 2) «Հող» կամ ըզուհող, 3) «Ութ», 4) «Քառասունք» և 5) «Տարելից»): Արէշում մի անէժք էլ կայ այդ տերմիններից մէկով.—«Հողիդ

¹⁾ Сбор. свѣд. о Кав. ч. II 304—5 „Поминки по умершимъ.“

վայ տամ, կամ հողիդ նստեմ»: Ուրուարիկցիք ունին 1) «Աշ»=(Թաղման հաց, Արէշի մասնակի բառը «շիլայմա»): 2) Չեօկ=(ամսական հաց), և 3) Голу=(տարեկիցի հացը): Голу-ն է, ահա, մարտին ընկնող այն մեծ տօները, որ յիշեցինք վերևում: Նա հնչում է ոչ թէ ուսական ձայնահնչմամբ Голу, որ այլակերպութիւն է ներկայացնում, այլ հայերէնի Հողը: Տեղն է յիշելու, որ ուսերէնով գրել լեռնացոց տերմիններն ու լեզական և բարբառի յատուկ օրինակները՝ գիտական ոչ մի նշանակութիւն չունի. հայերէնի շչականները և ատամնային տառերը—թ, փ, ք, ջ, ձ, ճ, լծորդները—զ, ժ, շ, ց, զ, հ, դ, ամենայարմարն են լեռնացոց բոլոր ձայների համար. կոկորդային ձայնը միայն չունի հայերէնը, բայց այդ ձայնը նոյնպէս չունին միւս բոլոր լեզուները: Усларъ П. К. այլևայլ տեսակէտներով, —որոնք իհարկէ իր լեզագիտական որոշումների հետ կապ չունին, —ուսերէնն է համարել յարմարագոյնը և ստեղծել էլ է ուսերէն տառերով և տառերի բաղադրութեամբ կովկասեան այբուբեն¹⁾. բայց նա խիստ անյարմար է օտարներին հրահանգ և ձեռնարկ ծառայելու. օտարներից բաւական է յիշել Հոլգէր Պեդերսընի հետ պատահած դէպքը, որ օօ° -ի հնչիւնը գտնելու համար, երեք չորս մեկնութիւններ և ձեռնարկներ քրքրելուց զկնի, ստիպւած էր 29 տողի մէջ անորոշ ենթադրութեամբ գրադուելու²⁾ և ահա Голу=Հողը նոյնպիսի մի օրինակ է, որը յիշեցինք արդէն վերևումը և որից երևում է որ հայերէն բառը թէպէտ կորցրել է ուրուարիկցոց համար և նրանց աչքում իւր ծագումը, բայց իբրև հեթանոսական սովորութեան մի տերմին՝ անիմաստ նշանակութեամբ, մնացել է նրանց հոգեհացի ծիսական պաշտաման մէջ:



¹⁾ Усларъ П. К. „Афхазскій языкъ“, о составленіи азбуковъ для кавк. языковъ, стр. 48—51.

²⁾ Հանդ. Ամս. 1906 VII էջ. 199:

Վ Ե Ր Ձ Ա Բ Ա Ն

Հայոց և ուրուարիկցոց ժողովրդագրական նիւթերի համեմատութիւնը դեռ աւելի երկար կարելի է շարուսակել. բայց մեր առաջարկած զուգակշիռներն էլ բաւական են որոշելու համար հայոց և լեռնացոց կուլտուրական յարաբերութեան սահմանը: Չենք ուզում մոռանալ, որ, առհասարակ, կովկասի ժողովուրդների կուլտուրական յարաբերութեան խնդիրը շատ բարդութիւններ ունի, շնորհիւ ժողովուրդների պատմական կեանքի խիստ փոփոխական վիճակի: Աւելորդ չէ յիշել մի քանի տեսութիւններ այդ առիթով: П. К. Усларъ հաստատել է, որ կովկասը եղել է ճնշւած և թոյլ ժողովուրդների համար հանգստատեղի և ապաստարան. և նրա այդ տեսութիւնը ճիշտ է համարւած: Ազգաթանգեզոսը այդ տեսութեան մի ապացոյց է տալիս, երբ յիշում է Տարօնից հալածւած քրմերի խօսքերը. «Երթամք մեք ի բնակիչս լերինն Կաւկաս՝ իկողմանս հիւսիսոյ. թերևս հնար լիցի և ապրեալք լիցուք¹⁾»: Նոյն խնդիրը շարժել է նաև Հոլգեր Պետերսըն, ելակէտ ունենալով արդէն բազմիցս նկատւած ճշմարտութիւնը թէ բարձր կուլտուրան միշտ յաղթող է, իսկ նրան դրացի յետամնաց ժողովուրդը — յաղթուող.

«Նոյնահնչիւն կովկասեան բառերը, ասում է նա, հայերէնէն առած ըլլալու են, քանի որ կովկասեան ժողովուրդը հայոցմէ քաղաքակրթօրէն և քաղաքականօրէն վար էին, և անոնցմէ հազիւ թէ միակ բառ փոխառած ըլլան, մինչդեռ ընդհակառակն հայք իրենց սեպհական լեզուագանձը մեծաբանակ տուած են կաւկասեան ժողովուրդոց²⁾»:»

Ներկայ դէպքում անհնար է այլ կերպ մտածել, քան այս հայազէտն է կարծում այն պարզ պատճառով, որ մահմէդական ուրուարիկցուց հայը երբէք չէր կարող խաչ կոխելու երգման անունը ուսանել, այլ ընդհակառակն. այդ ակնյայտնի է: Սակայն վերոյիշեալ տեսու-

¹⁾ Հմտ. Պատմագիրք Հայոց, Ազգաթանգեզոս. 1909 Տիֆլ. 406: П. К. Усларъ ուրիշ անգամ հաղորդել է հակառակ տեսութիւն, իբր թէ զաղթը և քաղաքակրթութիւնը կատարւած է հիւսիսից հարու, համաձայն կիմներեան աւանդութեան, որ հաղորդում է Հերոզոս (Лакскій языкъ, Тифл. 1890, 25).

²⁾ «Հայերէն և դրացի լեզուները»: Հանդ. Ամս. 1906, IX 287.

թիւնները ընդհանուր և անկոնկրէտ բնոյթ ունին, մինչդեռ հայոց և ուրուսերիկացոց կուլտուրական յարաբերութեան խնդիրը շատ որոշ պատասխանի է կարօտ: Պէտք է պարզել թէ երբ, ինչպէս և ինչու ուրուսերիկցի թիւրքը հայից ուսու և ազգւեց: Խնդիրը, ինարկէ, այդպէս ընդհանուրից մասնաւորելով, աւելի է դժւարանում նրա լուծումը. մանաւանդ որ ուրիշները մեզնից տարբեր կարծիք են յայտնել արդէն. նախ և առաջ М. М. Ковалевский է ուսումնասիրել ուրուսերիկացոց կեանքը և նրա կարծիքն էլ ծանրակշիւ է ներկայ խնդրում:

Ուրուսերիկցին իր կուլտուրայով միևնոյն օս ժողովուրդն է, ասում է յիշեալ հեղինակը: Օսի և ուրուսերիկցու մէջ եղած տարբերութիւնը հետևանք է մասմէդական մուլաների և շարիատի վերջին ոտուկովիտեան ընդհարումների ժամանակ զօրացած ազդեցութեան: Մինչդեռ օսերը մերթ քրիստոնէութեան ազդամբ, մերթ իբր կուլտուրական ձգտումների ինքնարտայով մոռացութեան են աւել շատ բան նախնական հնութիւնից, ընդհակառակն՝ ուրուսերիկցիները, իրենց պահպանողական և ձեռնարկական կրօնասիրութեան շնորհիւ, հնաւանդ շատ բան պահել են անփոփոխ վիճակով: Առհասարակ հիւսիս, Կովկասի թիւրք ժողովուրդը յաղթական բոլոր ազգերի բազմին է արժանացել. նորա նախնիները, թուով գերազանց գանձելով, նւաճեցին օսերին և իշխեցին նրանց վրա. բայց միևնոյն ժամանակ, լինելով կուլտուրայէս յետամնաց, ազգւեցին նպատակ օսերից, որոնք բարձր քաղաքակրթութիւն ունէին. ապացոյց են աշխարհագրական և ամիսների անունները, խօսակցական շատ բաներ, ժողովրդական հաւատալիքների արարողութիւնները, գերեզմանների հնախօսական պարագաները և այլն, — որոնք նոյն են թէ օսի և թէ թիւրքի բնակավայրում: Դասակարգային կաղմը և օրէնսդրական ու քաղաքացիական պատկերը նոյնպէս նոյն են: Ջարմանալ կարելի էր, ի հարկէ, այն անտարբերութեան վրա, որով յաղթական թիւրքը, իսպառ անուշազրութեան մատնելով իր անհատականութիւնը, ընդունել է ու սեպհականացրել օտար և քրիստոնէայ ժողովրդի օրէնքն ու դատաստանը, — եթէ մի-մի անալոգիաներ չլիին նէին այդպիսի ստրկամիտ յարմարութեան գերմանացիները առ հոմէակական օրէնքը, և սկանդինաւեան գաղութները առ Ֆրանսիական և անգլիական դատաստանադիրքը: Զէնքը մի յաղթողն է եղած այդ բոլոր դէպքերում, կուլտուրան՝ միւս: Իւր այս տեսութեան իբր ապացոյց, М. М. Ковалевский, անա, նկարագրում է, ի թիւս այլոց, նաև խաչի երդումը, որը, իբր թէ, քրիստոնէայ օսից է ուրուսերիկցուն անցել («У подшвы Эльборуса» Вѣстн. Евр. 1886 I, 108—9).

Պարզ է, որ հեղինակը ուրուսերիկցու անցեալի խնդիրը սպառել է այն մտքով, որ յաղթական թիւրքը իր արդի վիճակով ուրիշ ոչ ոք չէ, քան եթէ ինքը օսը: Բայց երբէք չի կարելի համաձայնել հեղինակի հետ թէ նրա մեն մի պատճառաբանութեան և թէ՛ ընդհանուր կրակացութեան առիթով: Եւ անա թէ ինչու. ուրուսերիկցու ազգագրական նիւթերը իրենց մի առանձնացած և տարբեր մասով վկայում են, որ Ուրուսերի կուլտուրայի օտականից օտար մի ուրիշ տարր ևս կայ, մի հնաւանդ և հեթանոսական տարր, որ ոչ օս ժողովուրդն ունի և ոչ որևէ լեռնական ուրիշ ցեղ: Այդ տարրի ծագումը, ըստ М. М., օտական է. իբր թէ օսերը առաջ ունէին այն տարրը և յետոյ քրիստոնէութեան ազդամբ մոռացել են, մինչդեռ թիւրքերը, իբրև յետամնաց ժողովուրդ, մի անգամ փոխ առնելուց յետոյ պահել են այն անփոփոխ: Նախ և առաջ ինքը այսպիսի բացատրութիւնը սխալ է, նրա համար, որ օսերը, օր. հայերի համեմատութեամբ աւելի պահպանողական են. այդ է վկայում նրանց համայնական կեանքը և նոքա պահել են շատ հեթանոսական տարր իրենց կրօնական, քրէական և ընտանեկան կեանքում, համաձայն իրա իսկ, հեղինակի նկարագրութեան «Родовой бытъ», Законъ и обычай на Кавказѣ» աշխատանքների մէջ: Ուստի եթէ հայերը պահում են հեթանոսական տարրերը մինչև այսօր ուրուսերիկցոց հետ համերաշխ, ինչպէս տեսանք արդէն, նրանք ևս առաւել օսերը պէտք է պահած լինէին նոյնը, եթէ արդարև ունենային նոքա այն տարրերը: Միւս կողմից օսերի քրիստոնէութեան մէջ հայերին գերազանցելու ոչ մի ապացոյց չունենք և ընդհակառակն գիտենք, որ լեռնցիք, նրանց թուում նաև օսերը, կրօնափոխութեան, իբր կեանքը, գոյքը և հողը ապահովու միջոցի, վրա անտարբեր աչքով են նայել հնում: (Տես ներքև նոյն հեղինակի խօսքերը): Մեզ թուում է, որ այս խնդրում М. М. աւելի է ոգևորել իր իդէայով, օտական ազգեցութեամբ, քան հիմք ունէր գրա համար¹⁾: Այդ բոլոր ժամանակ հեղինակը անուշազիր է թողել մի

¹⁾ Հակառակ Ֆրանսիական առաձին—comparaison n'est pas raison—համեմատութիւնը ապացոյց չէ:

խնդիր, որը ինքնըստինքեան պէտք է լինէր՝ ահա, ուրուերիւցուն յատուկ և օսին օտար ազգազրական նիւթերի ծագման մի մեկնութիւն: Եւ արդարև, յաղթական թիւրքը, որը, ըստ M. M., այնքան կուլտուրապէս անկազմակերպ հոգի ունէր, որ ամբողջապէս օսական կեանքին յարեց, այդ թիւրքը՝ նախ քան էլ բրուսի բարձունքին հասնելը, անցել էր իրանական և հնդ-եւրոպ. կուլտուրաների աշխարհով—Պարսկաստանով և Հայաստանով. թիւրքը կանգ էր առել այդ ճանապարհի վրա, և դարերով ապրել էր իրենից շատ բարձր քաղաքակրթութեան տէր յիշեալ ժողովուրդների մէջ. արդ՛ նախ քան օսին հանդիպելը, այդ ասիական հրոսը չէր ազդել արդե՞ծ որևէ կուլտուրայից, չունէ՞ր իսպառ կրթութեան պաշար, գէթ այնքան, որ օսականին ենթարկելու տրամադրութիւն ստեղծւած լինէր առաջուց. թէ նա, իսկապէս, խորհեց իր աշխարհակալութեան դարաւոր կեանքում ամեն խառնումից, և իբրև մաքուր տախտակ հանդիսացաւ՝ օսական կուլտուրան դրոշմելու համար: Այդ հարցը չէ յարուցւած M. M. յօդւածների մէջ: Մեր գուգակշիռները պատասխան են այդ խնդրին: Խաչի երգումը, հողի հոգեհացը, հարսանեկան բարձ փոխելն ու քաջնկերը—բոլորը հայկական միջնադարեան կուլտուրային յատուկ են եղած. միւս նմանութիւնները թէպէտ չեն պահել ճանապարհորդների նկարագրութեան մէջ այնպիսի հետք, որ նրանց մէջ լեզուական առնչութիւն նկատւէր, սակայն նրանց էութիւնը հասնում է մինչև Մովսիսական օրէնքը և այնտեղից էլ Գօշի դատաստանագիրքը. այդպէս է սովորութիւնը միամեայ ժամանակամիջոցի՝ վաճառքը յետ գնելու համար, և կաթնեղբարութեան օրէնքը: Երևոյթը ինքը միանգամայն հասկանալի է և բնական է. այդ փոխառութիւններից շատերը հեթանոսական բնոյթ ունին, արգելւած էին հայոց դատաստանագրքով և եկեղեցու կանոններով: Սովորութիւնների այդ առանձնայատուկ բնոյթը մահմէդականութեան համար խորշիլի չէր և դիւրին ըմբռնելի, իսկ տերմինների փոխառութիւնը ևս առաւել հասկանալի պատճառ ունէր, քանի որ թէ հեթանոսական ծագում ունէին նրանք և թէ անհասկանալի էին:

Այդպէս է, օր., կրրտ սեմիտ. արմատը, որ նշանակում է թրիատութիւն. մեր ժողովուրդը «կրտել» ասելով հասկանում է լծի գոմէշներին, եզներին, մասցու ոչխարներին և մարդկանց ներքինացնելը. «քեալթ» անել նշանակում է ծառերի վրա կտրւածք անել կամ սահմանի կամ սեպհականութեան իմաստով. «քեալթ» նշանակում է թրիատեալ աւնանդամ. միևնոյն ժամանակ քրիստոնէական սուրբ արարողութիւնը մկրտութիւն է կոչւում, որ նոյն արմատից է¹⁾:

Գալով օսական ազգեցութեան, նա էլ ունի որոշ և սոսկ տնտեսական պատճառ: Դեր է խաղացել այդ շարժման մէջ երկու հանգամանք: Առաջինը՝ կրօնափոխութիւնը, որ միջին դարերում կատարւում էր մերթ բռնի և մերթ կամաւոր ցանկութեամբ: Կամաւորապէս կրօնափոխ էին լինում այն քրիստոն. օս առւնները, որոնք դրացի առւնների մէջ չէզոքացած էին որևէ ցեղական, վրիժական կամ այլ պատճառով. նրանք ապաւինում էին յաղթական ժողովրդի, ներկայ դէպքում, թիւրքի կրօնին, իրենց հողն ու շուրը պաշտպանելու համար. Ուրուարին երևի հիմնւած է այդպիսի հանգամանքի հետևանքով.—«գուցէ որևէ պատճառից դրուած, բնիկ ազգարնակութիւնը մահմէդականութիւն է ընդունել, իր նախնական օս ծագումը մոռանալով իսպառ»: Նոյն իսկ հարաւային Կովկասում այդ երևոյթը գոյութիւն ունէր միջին դարում: Երկրորդ՝

Յաղթական թիւրքերը բնականօրէն որոնում էին աշխատող ձեռքեր և հովանաւորում էին ամենքին, ով գիտում էր նրանց: Այդ ձգտումը պատճառ եղաւ, որ տոնմական, բացառապէս մի ցեղով հիմնւած, համայնական աւելը բնորոնեց իր մէջ այլևայլ ցեղեր և ժողովուրդներ, և կազմուեցին արեան խառնակութիւններ և ազգաբաղական տարբերութիւններից բազկացած այնպիսի գաղթավայրեր, ինչպիսին են Азраковский և Урусбиевский, որոնց տառերները իշխանները ընդունել են իրենց հովանաւորութեան տակ բոլոր այն օտարներին, որոնք վրէժի կամ այլևայլ պատճառներով, իրենց հողից հրաժարելով, հպատակութիւն ցուցին, ծառայելով և հարկ տալով առւել էշխանին²⁾:

¹⁾ Պր. Ն. Մառ. «Մկրտութիւն Հայոց, Վրաց», արաբական փերսիա. Արարատ 1910 հոկտ. 89., Հմտ. «Ստուգը. հետազոտ. Կովկ. Բաղրուպանեան Հանդ. Ամս. 1908. V 153բ, 222.

²⁾ M. M. Ковалевский — „У подошвы Эльбурса“, 1886 II. 553.

Անա այդ կերպ քրիստոնեայ օս ժողովուրդը պահանջ. նրա ազգային կեանքից բաժանեց մի մեծ հատուած և միացաւ եկեօր տարրի հետ, ու ազրեց տարրեր «հարըլկի» տակ. մինչդեռ այդ հատուածի արտաքին յարաբերութեան կերպը փոխեց, նրա ներքին կուլտուրական կեանքը մնաց նախնականը, օտականը: Այսօր Ուրուսերիում այդ տարրի շնորհիւ է պահուած գլխաւորապէս օտական կուլտուրան. ազգագրական նիւթերը, ամիսների և աշխարհագրական անունները, խօսակցական բառերը, գերեզմանների հնախօսական իրերը այդ կրօնափոխ եղած բնիկ տարրից են մնացել և նրա շնորհիւ:

Ամփոփելով, տեսնում ենք հետեւալը. յաղթական սելջուկեան և այլ մոնղոլ ժողովուրդները երկար դարեր ապրելով իրանական ցեղերի և հայերի մէջ, ազդել են նրանցից, իւրացրել են նրանց կուլտուրայի հեթանոսամիտ տարրերը. յետոյ տարածելով լեռներում, այլ-այլիկ են իրենց թէ նախնական և թէ փոխառեալ կուլտուրական կեանքը նորանոր խառնակութեամբ և օտական ազդեցութեամբ: Մեր թւած զուգակշիռների նոյնութիւնները այդ պատմական հանգամանքի հետեանքն են, իրրև մնացորդներ հայկական ազդեցութեան: Ուստի այն հին հեթանոսական սովորութիւնները, որոնք միայն թիւրքերն ունին և որոնց օտերի մէջ բացակայելը M. M. մեկնում է իրր քրիստոնէական ազդեցութեամբ ջնջուած, նոքա մնացորդ են թիւրքերի նախասօսական պատմական շրջանից: Հպատակ օտերի մէջ այդպիսի սովորութիւնները բացակայում են յապացոյց այն հանգամանքի, որ յաղթական թիւրքը, իրրև մուրացածոյ և անհարազատ կուլտուրայի տէր ժողովուրդ, բնականօրէն՝ թոյլ գտնեց օտերին բնդուենել տալու իր մուրացածոյ կուլտուրան, որ բերել էր հարաւից. միայն մի կէտում թիւրքը բարոյական ոյժ արտայայտեց. շնորհիւ մահմէդականութեան, նա պահպանեց այն բոլոր մուրացածոյ սովորութիւնները, որոնք կովկասի հայերը, հեթանոսութեան շրջանից ստանալով, աւանդեցին իրենց յաղթական տէրերին:

ՍՏՈՒԳՎԱՄ Է 1971 Ք:

